ՀՏԴ՝ 929:75(479.25)Խանջյան
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-145

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻ ԼԻՆՈՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Հղման համար. Վարդանյան, Հռիփսիմե: «Մարդկային ճակատագրերը Գրիգոր Խանջյանի լինոփորագրություններում»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2024): 145-153. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-145

Հոդվածը ներկայացնում է XX դարի տաղանդավոր արվեստագետ, յուրօրինակ մտածողությամբ, գծանկարչական հմուտ վարպետությամբ օժտված Գրիգոր Խանջյանի որոշ լինոփորագրություններ:

Մայր Աթոռում պահվող «Կոմիտաս» լինոփորագրությունը ներկայացնում է ինքնամփոփ, ներքին լարվածությամբ օժտված երգահանին: Նրա դրամատիկական կերպարը կրում է դեպքերի ողբերգության ողջ իմաստավորումը՝ վեր հանելով ազգային ու համամարդկային գաղափարների միասնականությունը:

Հաջորդ լինոփորագրությունները երեք դրվագ են, ինչպես նշել է արվեստագետը, «իմ ժողովրդի կյանքի պատմությունից»՝ «1915 թիվ», «1920 թիվ» և «1970 թիվ»: «Հայաստան» գրաֆիկական եռանկարում վեր են հանված անհատի և ժողովրդի ճակատագրերը: Երեք ստեղծագործություններում էլ հեղինակը շեշտել, ընդգծել է ոչ միայն հերոսների դեմքերը, դիմախաղը, այլև, ինչը ոչ պակաս կարևոր է, նրանց ձեռքերը՝ վերջին մոտեցման մենք հանդիպում ենք նաև Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի Խանջյանի նկարազարդումներում:

Եվ այսպես՝ «1915 թիվ» լինոփորագրության հերոսուհին աղերսող, հառաչող, ցավի դեմ, ասես, մենամարտի դուրս եկած հայ կինն է: Գրաֆիկական սուղ միջոցներով Խանջյանը հասնել է առավելագույն արտահայտչականության՝ ընդգծելով անհատի դրաման, ազգի մեծագույն ողբերգությունը:

«1920 թիվ» աշխատանքում զինվորի հովանավորող, ուժեղ ձեռքերն են, որոնք իջել են մանուկի ուսերին: Աշխատանքը յուրատիպ է կառուցված՝ Խանջյանը հարկ չի համարել պատկերել զինվորի դեմքը՝ դրանով առավել ընդգծելով ձեռքերի պահպանող ուժը:

Եռապատկերի վերջին աշխատանքը «1970 թիվ» լինոփորագրությունն է, ուր երիտասարդ կինը մայրական ողջ գուրգուրանքով ու մայրական ջերմությամբ գրկել է երեխային: Նախորդ երկերի լարվածությունն այստեղ փոխարինվում է զգացական նրբագույն երանգներով:

Նկարիչը գրաֆիկական թերթերի միջոցով դիտողին է փոխանցել հերոսներից յուրաքանչյուրի բնավորությունը, ճակատագիրը, ապրումները, նաև՝ հայրենի հողից անբաժան լինելու նրանց կենսուղին: Նրանցից յուրաքանչյուրում կա ինքը՝ ազգի ճակատագրով, ողբերգությամբ ապրողը, հայրենիքի պաշտպանն ու անմնացորդ նվիրումով ծնողը:

Բանալի բառեր՝ Գրիգոր Խանջյան, լինոփորագրություններ, «Կոմիտաս», «Հայաստան» գրաֆիկական եռանկար, «1915 թիվ», «1920 թիվ», «1970 թիվ»:

---

* Արվեստագիտության թեկնածու, Երևանի պետական համալսարանի դասախոս, ripsivardanyan@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 13.07.2023, գրախոսելու օրը՝ 10.01.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

Ներածություն

Հոդվածի նպատակն է՝ ներկայացնել XX դարի տաղանդավոր արվեստագետ, յուրօրինակ մտածողությամբ, գծանկարչական հմուտ վարպետությամբ օժտված Գրիգոր Խանջյանի որոշ լինոփորագրություններ:

«Կոմիտաս» լինոփորագրությունը

Սուրբ Էջմիածնի՝ Կոմիտասին պատկերող յուրօրինակ նմուշներից է բացառիկ տաղանդով օժտված արվեստագետ Գրիգոր Խանջյանի [տե՛ս 2, էջ 5] «Կոմիտաս» լինոփորագրությունը (1962): XX դարի տաղանդավոր արվեստագետին հատուկ էր գրաֆիկական յուրօրինակ մտածողությունը, գծանկարչական հմուտ վարպետությունը: Նրան լայն ճանաչում են բերել հատկապես գրաֆիկական գործերը՝ գծանկարներ, փորագրություններ, օֆորտներ ու, հատկապես, գրքի գեղարվեստական ձևավորման լավագույն նմուշները: Պատմական տարբեր ժամանակաշրջաններին, եղելություններին անդրադարձն ու նրանց կերպավորումը նկարչին ակամա դարձրել են վերջինների «տարեգիրը»: Տվյալ ժամանակի գրքային արվեստի նվաճումներից են Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի համար արված նկարազարդումները [8, էջ 220]: 1963-65 թթ. սև ջրաներկով նրա վրձնած գրաֆիկական մեծադիր թերթերը, որոնք պահվում են ՀԱՊ-ում, Պարույր Սևակի պոեմի բանաստեղծական բարդ բազմազանության մեջ առանձնանում են ժողովրդի ու նրա ծոցից ելած հանճարեղ անհատի ճակատագրերի ընդհանրության, կյանքի լուսավոր ու մութ կողմերի հակամարտության, հավերժ պայքարի գաղափարները [տե՛ս 1, էջ 169-70]: Հետաքրքիր է, որ մինչ այդ նկարիչը շատ անգամ է անդրադարձել վարդապետի կերպարին, ինչն էլ, հավանաբար, դարձել է հետագա՝ «Անլռելի զանգակատան» [տե՛ս 4, էջ 422] նկարազարդման առաջնաքարը: «Տարբեր ժամանակներում բազմիցս կերպավորել եմ զանազան դրվագներ Կոմիտասի կյանքից, միշտ էլ զգալով ցանկություն նորից ու նորից վերադառնալ նրան: ...Պարույր Սևակի պոեմը մարմնավորման մի նոր առիթ հանդիսացավ, և նրա հետ մեկտեղ հրամցնում եմ ձեզ իմ Կոմիտասը՝ իր հոգեմաշ կյանքի բոլոր ոլորտներում»[1], - նշում է նկարիչը: Ինչպես «Անլռելի զանգակատան» նկարազարդումներում Կոմիտասի կերպարը դարձավ Խանջյանի համար պատկերաշարի լայթմոտիվը՝ միաժամանակ ցուցադրվելով ժողովրդի կյանքի համատեքստում [տե՛ս 9, էջ 65], այնպես էլ Մայր Աթոռում պահվող «Կոմիտասը» լինոփորագրությունում սևի ու սպիտակի համադրությունն առավել արտահայտիչ է դարձնում երաժշտի կերպարը, նրա մտորումները, ներքին խռովահույզ ալեկոծությունները: «Անհատի դեմքն առավել ընկալվում և հիշվում է, երբ այն կենդանի է, լարված և կենտրոնացած, և ոչ թե այն դեպքում, երբ ունի ճիշտ կառուցվածք, թեք հոնքեր,

[1] Այսպես է գրել Գ. Խանջյանը Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի համար կատարած իր նկարազարդումների ցուցահանդեսի կատալոգի առաջաբանում [տե՛ս 2, էջ 28]:

ուղիղ շուրթեր և այլն [տե՛ս 5, էջ 376]: Գծերի փափկության, մուգ ու գորշ թավշային տոնների, ստվերագծային տատանումների, մեղմ անցումների շնորհիվ հեղինակը գրեթե երփնագեղ տպավորության է հասել: Կոմիտասը՝ մինչ ծունկը պատկերված, ձեռքերը խաչած, կիսադեմով, ասես, առաջ է ընթանում, կամ՝ փորձում է, քանի որ ստեղծագործությունը թողնում է տպավորություն, թե կոմպոզիտորը փորձում է առաջ ընթանալ, բայց կանգնած է. նրա մարմնի վերին հատվածն առաջ է թեքված՝ փորձելով պոկվել տեղից, առաջ գնալ…

«Այսօր, նորէն, դէմքիդ վերայ գիշեր է կաթել,
Շանթ ու կայծակ ճայթելէն.
Սըրտիդ խորէն արիւն կ՚եռայ՝ ամպեր են պատել,
Հուր ու փայլակ սայթելէն:
Սըրտով բարի,
Հոգիդ արի՛
Որ քու նաւը
Չը շըւարի՛:
Կեանքի կըռի՛ւ ճիշտ դատելով՝
Կանաչ, խըռիւ միշտ զատելով:
Դեպի առա՛ջ.
Հեռի հառաչ» [3]:

«Կոմիտաս» լինոփորագրության գեղարվեստական մոտեցումը և նրա կոմպոզիցիոն կառուցվածքը դառնում են կոմիտասյան տողերի շարունակությունը: Թեև այստեղ ևս կոմպոզիտորի ուղղվածությունը լավատեսական է, սակայն միաժամանակ տպավորություն է ստեղծվում, որ շուրջբոլորը ճերմակ դատարկություն է, ունայնություն, գուցե՝ անելանելի իրավիճակ: Սպիտակ ֆոնին սակավ թռչուններ են, ներքևում՝ ոչ այնքան հստակ պատկերված գրքեր, անգամ տպավորություն է ստեղծվում, որ նրանց առջևի պլանում ցաք ու ցրիվ շղթաներ են: Այսինքն՝ երաժշտի ստեղծագործությունները, հայ ժողովրդի գրականությունը, ինչպես և մտավորականությունը, այդ թվում և ինքը՝ Կոմիտասը, «շղթայակապ» են: Ինչպես նկատել է 1916 թվականին Արևմտահայաստան այցելած ֆրանսիացի հրապարակախոս Անրի Բարբին՝ ով անցնում է այժմ ամայացած Հայաստանով, չի կարող չցնցվել, այնքան պերճախոս են ավերակների ու մահվան անվերջանալի հեռաստանները: Չկա մի ծառ, չկա մի ժայռ, մամուռի մի փունջ, որ պղծված չլիներ թափված արյան շիթերով: Չկա մի վտակ, գետ կամ գետակ, որ դեպի հավերժական մոռացում չտաներ հարյուր հազարավոր մեծ մարմիններ:

Չկա մի անդունդ, չկա մի ձոր, որ չլինեին գերեզման՝ բաց երկնքի տակ, որոնց խորքում ճերմակին չտային կմախքների բաց կույտեր, քանզի գրեթե ոչ մի տեղ մարդասպանները ոչ ժամանակ են ունեցել, ոչ նեղություն են քաշել թաղելու իրենց զոհերին: Երբեմնի աշխույժ ծաղկող հայկական բնակավայրերով այդ լայնարձակ գավառներում այսօր թագավորում է ավերումն ու ամայությունը [տե՛ս 6]:

Կոմիտասն, ասես, քայլում է այդ «ամայացած Հայաստանով»: Պատկերի

կոմպոզիցիոն ռիթմը լարվածության գերագույն աստիճանի է հասել: Հուզական մթնոլորտը, տեսարանի ընդհանուր տրամադրությունը համահունչ է դեպքերի պատմական ընկալմանը: Կոմիտասն ինքնամփոփ է, ներքին լարվածությամբ օժտված, նրա դրամատիկական կերպարը կրում է դեպքերի ողբերգության ողջ իմաստավորումը: Աստիճանաբար զարգացող դրամատիզմը ծայրահեղ լարվածության է հասնում՝ վեր հանելով ազգային ու համամարդկային գաղափարների միասնականությունը: Խանջյանի ձևաոճական լայնախոհ մտածելակերպը, կուռ, հստակ մատուցելաձևը բարձրակետին են հասցնում կերպարի ազդեցիկությունը ու հոգեբանական հուզականությունը: «Հայ արվեստում Գրիգոր Խանջյանն ստեղծեց նկարազարդման իր ոճը, գրաֆիկայի վարպետության այն մակարդակը, ուր գեղանկարչի մտածելակերպը զուգակցվել է գծանկարի հմուտ ու հստակ զգացողությանը» [2, էջ 28], - նշում է արվեստաբան Մանյա Ղազարյանը և շարունակում. «…Խանջյանը «տրամադրություն» զգացող, «տրամադրությունը» գեղարվեստական կերպարներով վերարտադրող նկարիչ է, տրամադրութուն, որը պարփակված է նկարազարդման ամեն մի հատվածում» [2, էջ 31]: Վարդապետի դեմքին, աչքերին ընկած ստվերն, ասես, Կոմիտասի կյանքը սուզել է մթության մեջ, սակայն ինքն իր անկոտրում կամքով շրջապատված է անսահման լույսով: Խանջյանական Կոմիտասն անսահման, գրեթե ողբերգականորեն միայնակ է ոչ միայն արտաքին գործոնների պատճառով, այլ՝ առավել իր բնույթի բացառիկությունից ելնելով [7, էջ 249]:

«Հայաստան» գրաֆիկական եռանկարը

Ներկայացվելիք հաջորդ լինոփորագրությունները երեք դրվագ են, ինչպես նշել է արվեստագետը, «իմ ժողովրդի կյանքի պատմությունից»՝ «1915 թիվ», «1920 թիվ» և «1970 թիվ»: «Հայաստան» գրաֆիկական եռանկարում վեր է հանված անհատի ճակատագիրը, ժողովրդի ճակատագիրը: Առհասարակ, Խանջյանի ստեղծագործության հիմքում ընկած է մարդկային ճակատագիր, եթե կարելի է այսպես ասել, «կառուցելու», «կերտելու» ձգտումը: Երեք ստեղծագործություններում էլ հեղինակը շեշտել, ընդգծել է ոչ միայն հերոսների դեմքը, դիմախաղը, այլև, ինչը ոչ պակաս կարևոր է, նրանց ձեռքերը՝ վերջին մոտեցման մենք հանդիպում ենք նաև Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի Խանջյանի նկարազարդումներում:

Եվ այսպես՝ «1915 թիվ» լինոփորագրությունը, ցույց է տալիս աղերսող, հառաչող, ցավի դեմ ասես մենամարտի դուրս եկած հայ կնոջ կերպարը: Արվեստագետը ջղաձիգ լարվածությամբ է կառուցել ողջ ստեղծագործությունը՝ սահուն անցում կատարելով հերոսուհու ձեռքերից դեպի դեմքը: Փորագրության յուրակերպ տեխնիկան հնարավորություն է տվել լավագույնս արտահայտել կյանքի առաջացրած դեմքի ամեն մի կնճիռ, իսկ հերոսուհու այտին թափված վարսերն, ասես, այդ կնճիռների շարունակությունը լինեն: Գրաֆիկական սուղ միջոցներով Խանջյանը կարողացել է հասնել առավելագույն արտահայտչականության: Դեմքի, ձեռքերի լուսաստվերը, սևի ու սպիտակի համադրությունը, կնոջ կիսադեմը դարձրել են խոսուն՝ հերոսուհու մեջ մարմնավորելով հայ ժողովրդի,

գուցեև հենց իր՝ հեղինակի հավաքական կերպարը, ներքին ճիչը, բողոքը ժամանակի ու անարդարության դեմ: «1915 թիվ» ստեղծագործության մեջ անհատի դրաման է, ազգի մեծագույն ողբերգությունը:

Ինչպես արդեն նշեցինք, Խանջյանը ձեռքերի միջոցով է նաև ստեղծագործություններին տվել պատմություն, ի դեպ, դա բնորոշ է նրա արվեստին, թե՛ գեղանկարչական և թե՛ գրաֆիկական աշխատանքներում: Կերպարների ձեռքերի խաղը, նրանց դերն ու ակտիվ մասնակցությունն են նաև կերտում, կերպարում հերոսների բնավորությունն ու ճակատագիրը: Ինչպես նշում է Մանյա Ղազարյանը՝ «Հայաստան» գրաֆիկական եռանկարում ձեռքերը դարձել են գաղափարական արտահայտչականության հիմնական կրողը [2, էջ 33]:

«1920 թիվ» աշխատանքում զինվորի հովանավորող, ուժեղ ձեռքերն են, որոնք իջել են մանուկի ուսերին: Հեղինակը հետաքրքիր մոտեցում է ցուցաբերել այս ստեղծագործությանը՝ առաջին պլանում են զինվորը հզոր, ահռելի մեծ ձեռքերը և մանուկի խոնարհ ու վստահող դեմքը: Ձեռքերի մեծությունը, անգամ երեխայի դեմքից մեծ պատկերելը, պատահական չէ՝ այն առավել ընդգծում է զինվորի՝ պաշտպանելու կարողությունը: Աշխատանքը յուրատիպ է կառուցված՝ Խանջյանը հարկ չի համարել պատկերել զինվորի դեմքը՝ դրանով առավել ընդգծելով ձեռքերի ուժը, և հետո, գուցե, հնարավոր չէր էլ լինի դեմքը պատկերել առավել զորեղ, քան ձեռքերն են:

Եռապատկերի վերջին աշխատանքը «1970 թիվ» լինոփորագրությունն է, ուր երիտասարդ կինը մայրական ողջ գուրգուրանքով ու մայրական ջերմությամբ գրկել է երեխային: Այս ստեղծագործությունն, ի տարբերություն նախորդ երկուսի, արտահայտում է ամենից նրբագույն զգացմունքները, նաև հեղինակն էլ է այդ կերպ կառուցել գրաֆիկական թերթը: Մանուկին փարված մոր դեմքի լուսավորությունն ակամա փոխանցվում փարված փոքրիկին: Կնոջ և՛ ձեռքերը, և՛ դեմքը զերծ են ծանր ճակատագրի դրոշմից, տառապանքից, անարդյունք պայքարից: Եռապատկերի ամենից լուսավոր թերթը հույս և հավատ է ներշնչում դիտողին: Այստեղ չկա նախորդների ջղաձիգ լարվածությունը, այստեղ առկա է մոր և մանկան անդադար երկխոսությունը:

Պատահական չէ, որ Խանջյանն ասել է. «Սովորաբար, նկարազարդվող գրքերն ընտրում եմ ինքս… գերադասում եմ այնպիսի գրքեր, որոնք համահունչ են ոչ միայն իմ զգացմունքներին, այլև իմ կարողությանը» [2, էջ 44]: Վստահ ենք, որ այս խոսքերը վերաբերում են նրա բոլոր աշխատանքներին. մեր ներկայացրած բոլոր ստեղծագործություններին՝ ևս: Նրանցից յուրաքանչյուրում կա ինքը՝ ազգի ճակատագրով, ողբերգությամբ ապրողը, հայրենիքի պաշտպանն ու անմնացորդ նվիրումով ծնողը:

Եզրակացություն

Այսպիսով, եթե «Կոմիտաս» լինոփորագրության մեջ ինքնամփոփ, ներքին լարվածությամբ օժտված երգահանի՝ դեպքերի ողբերգության ողջ իմաստավորումը կրող դրամատիկական կերպարի միջոցով նկարիչը վեր է հանում ազգային ու համամարդկային գաղափարների միասնականությունը, ապա «Հայաս-

տան» գրաֆիկական եռանկարի «1915 թիվ», «1920 թիվ» և «1970 թիվ» լինոփորագրություններում նա, վեր հանելով անհատի և ժողովրդի ճակատագրերը, շեշտում և ընդգծում է ոչ միայն հերոսների դեմքերը, դիմախաղը, այլև, ինչը ոչ պակաս կարևոր է, նրանց ձեռքերը՝ վերջին մոտեցման մենք հանդիպում ենք նաև Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի Խանջյանի նկարազարդումներում: Գրաֆիկական թերթերի միջոցով Գ. Խանջյանը դիտողին է փոխանցում հերոսներից յուրաքանչյուրի բնավորությունը, ճակատագիրը, ապրումները, նաև՝ հայրենի հողից անբաժան լինելու նրանց կենսուղին: Նրանցից յուրաքանչյուրում առկա է ինքը՝ ազգի ճակատագրով, ողբերգությամբ ապրողը, հայրենիքի պաշտպանն ու անմնացորդ նվիրումով ծնողը:

Գրականություն

1. Աղասյան Ա. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում. Երևան, «Ոսկան Երևանցի», 2009:
2. Խանջյան Գ. Ալբոմ (տեքստի հեղինակ՝ Մանյա Ղազարյան). Երևան, «Սովետական գրող», 1978:
3. Կոմիտաս, Առաջ, https://komitasmuseum.am/առաջ/page/2/
4. Միրզախանյան Ռ., Հակոբյան Ա. Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը. Երևան, «Տիգրան Մեծ», 2014:
5. Арнхейм Р. Искусство и визуальное восприятие. Москва, «Прогресс», 1974.
6. Барби А. В стране ужаса. Мученица Армения [свидетельства очевидцев]. Москва, «ЮниПресс», 2008.
7. Гамагелян В. Комитасовский цикл Григора Ханджяна «Несмолкаемая колокольня», Вестник общественных наук. Ереван, № 3, 2018, с. 245-258.
8. Степанян Н. Искусство Армении. Москва, «Советский художник», 1989.
9. Степанян Н., Зурабов Б. Григор Ханджян, Живопись, графика. Москва, «Советский художник», 1987.

References

1. Aghasyan A. Hay kerparvesti zargacman ughinery XIX–XX darerum. Yerevan, “Voskan Yerevanci”, 2009.
2. Xanjyan G. Albom (teqsti heghinak Manya Ghazaryan). Yerevan, “Sovetakan grogh”, 1978.
3. Komitas, Araj, https://komitasmuseum.am/araj/page/2/
4. Mirzaxanyan R., Hakobyan A. Socialistakan realizmy ev xorhrdahay kerparvesty. Yerevan, “Tigran Mec”, 2014.
5. Arnhejm R. Iskusstvo i vizualnoe vosprijatie. Moskva, “Progress”, 1974.
6. Barbi A. V strane uzhasa. Muchenica Armenija [svidetelstva ochevidcev]. Moscow, “JuniPress”, 2008.
7. Gamagelyan V. Komitasovski cikl Grigora Handzhjana “Nesmolkaemaja kolokolnja”, Vestnik obshhestvennyh nauk. Yerevan, № 3, 2018, s. 245-258.
8. Stepanyan N. Iskusstvo Armenii. Moscow, “Sovetskij hudozhnik”, 1989.
9. Stepanyan N., Zurabov B. Grigor Handzhyan, Zhivopis, grafika. Moscow, “Sovetskij hudozhnik”, 1987.

ЧЕЛОВЕЧЕСКИЕ СУДЬБЫ В ЛИНОГРАВЮРАХ ГРИГОРА ХАНДЖЯНА

РИПСИМЕ ВАРДАНЯН*

Для цитирования: Варданян, Рипсиме. “Человеческие судьбы в линогравюрах Григора Ханджяна. *Искусствоведческий журнал,* N 1 (2024): 145-153. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-145

В статье представлены некоторые линогравюры мастера изобразительного искусства XX века, яркого, незаурядного художника, живописца Григора Ханджяна.

На линогравюре «Комитас», хранящейся в Первопрестольном Святом Эчмиадзине, представлен внутренне напряженный, замкнутый в себе образ гениального композитора. Его драматичный облик затаил в себе всю глубину пережитой трагедии, напоминая о нераздельности национальных и общечеловеческих идей.

В графическом триптихе «Армения» выведены, как отметил художник, три эпизода истории армянского народа: «1915 год», «1920 год» и «1970 год». Благодаря композиционному решению, на первый план выдвинута философская задумка автора. Во всех трех графических листах акцентированы не только чрезвычайно выразительные лица героев. Немало психологизма вложено и в изображение «говорящих» рук. Кстати, аналогичный прием мы наблюдаем и в иллюстрациях художника к «Ранам Армении» Хачатура Абовяна.

В героине линогравюры «1915 год» сосредоточена скорбь армян, прошедших через ад Геноцида. Повествуя о величайшей трагедии армянского народа Ханджян, прибегнув к ограниченным изобразительным средствам, добился предельной выразительности.

В произведении «1920 год» выведены лежащие на плечах ребенка сильные руки солдата. Своеобразным построением графического листа – Ханджян не счел нужным изобразить лицо солдата – подчеркивается надежность оберегающих рук.

Последняя работа триптиха – линогравюра «1970 год»: молодая мать тепло и ласково обнимает ребенка. Драматзим предыдущих двух работ сменяется здесь спокойным, умиротворяющим, полным надежды настроением.

Художник воплотил в рассматриваемых работах характер и судьбу героев, живущих жизнью своего народа, их неотделимость от родной земли.

Ключевые слова: Григор Ханджян, линогравюры, «Комитас», графический триптих «Армения», «1915 год», «1920 год», «1970 год».

---

* Преподаватель Ереванского государственного университета, кандидат искусствоведения, ripsivardanyan@mail.ru, статья представлена 13.07.2023, рецензирована 10.01.2024, принята к публикации 03.06.2024.

HUMAN DESTINIES IN GRIGOR KHANJYAN'S LINOCUTS

HRIPSIME VARDANYAN*

For citation: Vardanyan, Hripsime. "Human destinies in Grigor Khanjyan's linocuts", *Journal of Art Studies,* N 1 (2024): 145-153. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-145

The article presents some linocuts by the renowned Armenian artist of the XX century with a unique mindset and superb graphic skills, the painter Grigor Khanjyan.

The linocut "Komitas", stored in `12345the Ejmiatzin Cathedral, represents the inwardly strained, withdrawn image of the genius composer, whose facial expression reveals all the bitterness of the tragedy he had gone through. The work reminds the viewer of the inseparability of national and universal ideas.

In the graphical triptych "Armenia", as the artist noted, three episodes of Armenian history are depicted: "The Year 1915", "The Year 1920" and "The Year 1970". Due to the aptly found compositional solution, the philosophical idea of the work is fully actualized. In all three linocuts, emphasized are not only the extremely expressive faces of the heroes. The "speaking" hands are endowed with no less psychological insight. Khanjyan applied a similar approach in his illustrations to Khachatur Abovyan's novel "Wounds of Armenia".

The woman in the linocut "The Year 1915" is a concentration of the woes of Armenians, who passed through the hell of the Genocide. With very few graphic means, Khanjyan achieved utmost expressiveness, telling about the greatest tragedy of the Armenian nation.

In "The Year 1920", strong hands of a soldier rest on the shoulders of a child. The uncommon composition – Khanjyan did not consider it necessary to depict the soldier's face – the dependability of these safeguarding hands is accentuated.

The last work of the triptych is the linocut "The Year 1970", in which we see a young woman hugging her baby warmly and softly. Here, a tranquil, peaceful, hopeful state of mind substitutes for the tension of the previous two works.

In the discussed works, the artist embodied the nature and destiny of each of the heroes, their unalike life paths, inseparable from their native land.

Key words: Grigor Khanjyan, linocuts, "Komitas", graphical triptych "Armenia", "The Year 1915", "The Year 1920", "The Year 1970".

* Lecturer at the Yerevan State University, Doctor of Arts, ripsivardanyan@mail.ru. The article was submitted on 13.07.2023, reviewed on 10.01.2024, accepted for publication on 03.06.2024.

Գրիգոր Խանջյան

Կոմիտաս

1915 թիվ

1920 թիվ

1970 թիվ